# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր» համակարգում նոր գործառույթների ավելացում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և ՀՀ տնտեսվարող սուբյեկտների միջև՝ փոխանցված երրորդ կողմի մեխանիզմի կիրառմամբ, անդրսահմանային առևտրի ժամանակ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման և նոր գործառույթների ավելացման ներդրման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 20.04.2026թ. N 239/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.05.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պողոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Պողոսյանը, Ա.Մարդարյանը, Հ.Հարությունյանը, Ճեպանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Ա.Մխիթարյանը:

## 1. Հայտերի ուսումնասիրության արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը կասեցրել էր հանձնաժողովի նիստը հայտերի ուսումնասիրության նպատակով: Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերը արձանագրեց.

Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «ԼՈԻԻՍՈՖՏ» ՍՊԸ-ի, «ԻԲՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ի, «ԻԲՍ ՍՈՖՏ» ՍՊԸ-ի, «ԾՍ Ռազրաբոտկա» ՍՊԸ-ի, «ՑՌՍ պլատֆորմեննիե սերվիսի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն՝

ա) «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1) Առկա չէ թիվ 12.10.2023թ. կնքված DU0734 №9/279192-Д ծածկագրով գնման պայմանագրի կողմերի հաստատված՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2) 05.10.2022թ. կնքված DH5378 №0173100008622000024 ծածկագրով գնման պայմանագրում կողմերի ստորագրությունները բացակայում են:

3) 12.12.2022թ. կնքված DH5247 №ФКУ0620/12/2022/РИС ծածկագրով գնման պայմանագրում կողմերի ստորագրությունները բացակայում են:

4) 01.11.2022թ. կնքված DH5403 №0173100008622000042 ծածկագրով գնման պայմանագրում կողմերի ստորագրությունները բացակայում են:

5) 23.01.2023թ. կնքված DH5469, № ФКУ0014/01/2023/ЭГИС ծածկագրով գնման Պայմանագրում կողմերի ստորագրությունները բացակայում են:

6) 26.09.2022թ. կնքված DH5365 №ФКУ0419/09/2022/ЭГИС ծածկագրով գնման պայմանագրում կողմերի ստորագրությունները բացակայում են:

7) 01.02.2023թ. կնքված № DH5470 ծածկագրով գնման պայմանագրի սկզբնական գինը կազմել է 1 614 999 999 RUB, ոստագայում պայմանագրի գինը թիվ-8 համաձայնագրով նվազեցվել է և այն սահմանվել է՝ 1 526 634 349 RUB: Գնման պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը կազմում է 1 529 713 603 RUB, սակայն առկա չէ պայմանագրի գինը ավելացնելու վերաբերյալ պայմանագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

բ) «Մասնագիտական ռեսուրսներ» չափանիշի մասով առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1) Առաջարկված աշխատակազմում ներգրավված Սեմյոն Դանկովի, Իրինա Եփիմովայի, Վլադիմիր Տոչենկոյի, Եվգենիա Կոնդրաշովայի, Աննա Մոլչանովայի, Իրինա Եպանչինցևայի, Սերգեյ Լարիոնովի, Դմիտրի Զոլինի, Սերգեյ Վելիկանովի, Իրինա Միկլյաևայի, Ալեքսանդր Ալեքսանդրովի, Իրինա Վազանովայի,

Ալենա Ժիլցովայի, Սերգեյ Կիգիտի, Տատյանա Կրասի, Պյոտր Գլադկինի հաստատած գրավոր համաձայնություններում սխալ է նշված գնման առարկայի անվանումը և գնման ընթացակարգի ծածկագիրը:
- «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն՝
ա) «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝
1. 28.06.2023թ. կնքված PSMP4-GO-RFB-2.1.4 ծածկագրով գնման պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը ներկայացված է առանց կողմերի ստորագրությունների:

10.06.2024թ. կնքված ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/5 ծածկագրով գնման պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրված է միակողմանի:

**2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Համաձայն ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքի, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և /կամ/ երբ ՀՀ կառավարության 20.06.2025թ. N 817-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված անձը մասնակցի կողմից առաջարկվում է որպես գործակալ /ենթակատարող/, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «ՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ-ին, «ԻՔՍ Էքսպերտիզա» ՍՊԸ-ին, «ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ին, «ՑՍ Ռազդաբյուրո» ՍՊԸ-ին, «... պրոգրամմինգ սերվիսի» ՍՊԸ-ին և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Նիստը վերսկսել՝ 2026 թվականի հունիսի 11-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու 3,7 հասցեում:

Կայացվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պողոսյան

Անդամներ՝ Ա.Պողոսյան

Ա.Սարդարյան

Հ.Հարությունյան

Մ.Հայրապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան